



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

Երևան 0010, Մելիք-Աղամյան 1
Հեռ. 011-800-077

**«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին**

**պարզենը՝ Կենտրոնի հարկային տեսչության
պեյր պարոն Ա. Հարությունյանին**

Հարգելի պարոն Թադևոսյան

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով՝ Ձեր 04.02.2016թ. N011 (ՀՀ ՖՆ մուտք 11.02.2016թ. N6866-16) գրության վերաբերյալ հայտնում եմ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 20-րդ, 20.1-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 11.11.2010թ. N1504-Ն որոշմամբ կարգավորվում են էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրման, էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգերը: Միաժամանակ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.10.2011թ. N2875-Ն հրամանով սահմանված է նաև նախկինում էլեկտրոնային եղանակով դուրս գրված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N1504-Ն որոշման N4 հավելվածով հաստատված՝ հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգին համապատասխան անվավեր ճանաչված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներկայացման կարգը:

Հաշվի առնելով վերոնշյալ ակտերով սահմանված կարգավորումները գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում եմ.

1) ԱԱՀ վճարող համարվելու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով. այդ թվում նաև ՀՀ կառավարության 11.11.2010թ. N1504-Ն որոշման N4 հավելվածով սահմանված կարգով անվավեր ճանաչված հարկային հաշիվների փոխարեն, հարկ վճարողների կողմից էլեկտրոնային եղանակով կարող են դուրս գրվել հարկային հաշիվներ՝ ՀՀ կառավարության 11.11.2010թ. N1504-Ն որոշմամբ սահմանված կարգով,

2) ԱԱՀ վճարող համարվելու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքի մասով դուրս գրված և սահմանված կարգով անվավեր ճանաչված էլեկտրոնային

հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.10.2011թ. N2875-Ն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ձևով ներկայացնելու անհրաժեշտություն չկա, եթե այդ տեղեկությունները հարկ վճարողը ներկայացրել է հարկային մարմին ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում հարկային հաշիվների դուրսգրման e-invoicing ծրագրի միջոցով՝ կիրառելով ծրագրի համապատասխան ֆունկցիան (ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.10.2011թ. N2875-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետ):

Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրումը չի սահմանափակում շրջանառության հարկ վճարող լինելու հարցում և շրջանառության հարկ վճարողը կարող է դուրս գրել այդպիսի հաշիվ, եթե դա վերաբերվում է նախորդ՝ ԱԱՀ վճարող համարվելու ժամանակաշրջանին և ԱԱՀ-ով հարկվող գործարքներին:

Հարգանքով՝



Վ. Միրումյան